

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ¹

ՆՈՐԱՅՐ ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

Ներածություն: Հետազոտության են ենթարկվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի նկատմամբ իրականացվող ֆինանսական վերահսկողության գործիքակազմի առանցքային համարվող Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (CAMELS), Բանկի գործունեության միասնական հաշվետվության (UBPR), Ռիսկով կշռված ակտիվների (ՌԿԱ), ինչպես նաև Ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուսաֆոնդերի ձևավորման լրացումները բնապահպանական, սոցիալական, բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ԲՄԿ) ռիսկերի տեսանկյունից: Թեմայի հրատապությունը պայմանավորված է մարդկության առջև ծառացած գլոբալ հիմնախնդիրների՝ կլիմայի տաքացման արդյունքում մարտահրավերների դիմակայման նպատակով ՄԱԿ-ի, ինչպես նաև հեղինակավոր ֆինանսական հաստատությունների՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Միջազգային ֆինանսական Կորպորացիայի և այլն ներկայացված ԲՄԿ ռիսկերի կառավարման համակարգերի ներդրման հրամայական պահանջով: Արդյունքում ֆինանսական հաստատությունները և հատկապես առևտրային բանկերը աշխարհաքաղաքական իրադարձությունների (Արցախյան պատերազմ, ռուս-ուկրաինական պատերազմ և այլն) հետ մեկտեղ, պարտադրված են կառավարելիության շրջանակում պահել ԲՄԿ ռիսկերը և դրանց կառավարման համարժեք համակարգեր մշակել: Եկամտաբերության բավարար մակարդակի ապահովման հիմնախնդիրն առևտրային բանկերն այսօր պետք է իրականացնեն ընդգծված սահմանափակումների պայմաններում: Պատասխանատու ֆինանսավորման փիլիսոփայությունը ենթադրում է ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարում, որն էլ իր հերթին ենթադրում է ֆինանսավորման ոլորտների բացառումների ցանկի մշակում: Դոնոր կազմակերպությունների դիրքորոշումը հստակ է՝ ֆինանսավորել նախագիծը՝ հաշվի առնելով վարկառուի գործունեության ոլորտի ԲՄԿ ռիսկերը:

Միանշանակ է, որ ԲՄԿ ռիսկերի կարգավորման բնագավառում բացառիկ դերակատարություն ունի ՀՀ կենտրոնական բանկը, որպես բանկային գործունեության մեզակարգավորող: ՀՀ կենտրոնական բանկն իր տնօրինության տակ գտնվող Ֆինանսական վերահսկողության գործիքակազմի օգնությամբ պետք է մոտիվացնի առևտրային բանկերին ԲՄԿ ռիսկերի արդյունավետ

¹ Հոդվածում տեղ գտած առաջարկությունների գերակշիռ մասը հավասարապես կիրառելի են ֆինանսաբանկային մյուս կազմակերպությունների համար նույնպես:

կառավարման բնագավառում: Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության կատարելագործման արդյունքում ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի համար կարևորվում է վերահսկողության նոր գործիքի՝ պրոլենցիալ վերահսկողության և գնահատման գործընթացի (supervisory review and evaluation process - SREP) ներդրումը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայումս կիրառվող ֆինանսական վերահսկողության գործիքներից առանձնացրել և վերլուծության ենք ենթարկել 4 առանցքային գործիք՝ Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (CAMELS), Բանկի գործունեության միասնական հաշվետվության (UBPR), Ռիսկով կշռված ակտիվների (ՌԿԱ), ինչպես նաև Ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուսաֆոնդերի ձևավորման հնարավոր կատարելագործման մոտեցումները բնապահպանական, սոցիալական, կառավարման (ԲՄԿ) ռիսկերի տեսանկյունից: Կարծում ենք, որ վերը ներկայացված գործիքների արդիականացումը ԲՄԿ ռիսկերի գնահատման և գնահատման միջոցով հնարավոր է առաջընթաց գրանցել պատասխանատու ֆինանսավորման ուղղությամբ առևտրային բանկերի գործունեության կանոնակարգման բնագավառում:

Գրականության ակնարկ: ԲՄԿ ռիսկերին նվիրված ուսումնասիրությունները կարելի է համարել ժամանակակից ռիսկերի տեսության ամենահրատապ և լուծումներ պահանջող բնագավառներից մեկը: Միանշանակ է, որ ԲՄԿ ռիսկերի կառավարմանն ուղղված է բոլոր տնտեսվարող սուբյեկտների մասնագիտական ուշադրությունը: Այս առումով ֆինանսական հաստատությունները և հատկապես բանկերը բացառություն չեն: Պատահական չէ այն հանգամանքը, որ ԲՄԿ ռիսկերի կառավարման առաջամարտիկներից են հանդիսանում բանկերը, քանի որ վերջիններս բանկային գործունեության իրականացման ժամանակ գործնականում մշտապես առնչվում են տնտեսության տարբեր ճյուղերի և գործունեության ոլորտների ԲՄԿ ռիսկերի գնահատման հետ, որպեսզի արդյունավետ որոշում կայացվի այս կամ այն վարկառուին ֆինանսավորման հարցում: Այսպիսով, վարկառուի վարկունակության իրատեսական գնահատման հետ մեկտեղ բանկերի առջև հրամայական պահանջ է դրվում իրատեսական գնահատական տալ նաև ԲՄԿ ռիսկերին, քանի որ վերջիններիս ոչ համարժեք գնահատականը կարող է ֆինանսական առումով լուրջ հետևանքներ ունենալ վարկառուի համար, ընդհուպ մինչև նրա դեֆոլտը:

Տրամաբանական է, որ տնտեսագիտական գրականության մեջ ԲՄԿ ռիսկերը համարվում են ներկայումս եթե ոչ առաջնային, ապա ամենից շատ շրջանառվող և գիտնական վերլուծաբանների կողմից դիտարկվող հիմնախնդիրներից մեկը: ԲՄԿ ռիսկերին անդրադարձ է կատարվել և համապատասխան մեթոդական ուղեցույցներ, ստանդարտներ, գիտագործնական մոտեցումներ են մշակվել ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի (WB), Ասիական

զարգացման բանկի (ADB)², Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC)³, Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի (BIS), Եվրոպական կենտրոնական բանկի (ECB), Կանաչ կլիմայի ֆոնդի (Green Climat Fund), Ֆինանսական համակարգի «կանաչացման» ցանցի (NGFS – Network for Greening the financial system), Եվրոպական Բանկային կառավարման (EBA – European Banking Authority), հանրահայտ աուդիտորական կազմակերպությունների (big 4) կողմից և այլն:

ԲՄԿ ռիսկերի բնագավառում ուսումնասիրություններ և վերլուծություններ են իրականացվել գիտնական-հետազոտողների կողմից՝ նշելով դրա կարևորությունը բանկային գործունեության կարգավորման բնագավառում⁴: Բանկային բնագավառում վերլուծություններում հիմնական շեշտադրումը կատարվում է վարկառուի գործունեության ոլորտի, ֆինանսավորման համար ներկայացված բիզնես նախագծի շրջակա միջավայրի, սոցիալական, և կորպորատիվ կառավարման ռիսկերի պատշաճ վերլուծությանը և հնարավոր կորուստների բացահայտմանը⁵:

Հայաստանի պարագայում պատասխանատու ֆինանսավորման և ԲՄԿ ռիսկերի կառավարման հիմնախնդիրներին անդրադարձել են ՀՀ Կենտրոնական բանկը, ՀՀ Ֆինանսերի նախարարությունը, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը⁶: «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի հովանավորությամբ իրականացվել են բազմաթիվ սեմինարներ, ֆորումներ և կոնֆերանսներ: Ուսումնասիրություններ են կատարվել միջազգային մասշտաբով խոշոր բանկերի կողմից, որի արդյունքում կառավարման համապատասխան

² ENVIRONMENTAL ASSESSMENT GUIDELINES, ADB, 2003

³ Guidance Note 1 Assessment and Management of Environmental and Social Risks and Impacts, IFC, WB, Published January 1, 2012 (updated June 14, 2021)

⁴ Aboud A. Diab A. (2018). The impact of Social, Environmental and Corporate Governance, Disclosures on Firm Value, *Jae* 8, 2018, Miralles-Quirós, M. M., Miralles-Quirós, J. L., & Redondo Hernández, J. (2019). ESG performance and shareholder value creation in the banking industry: International differences. *Sustainability*, 11(5), 1404. Atan, R., Alam, M. M., Said J., and Zamri, M. (2018) The impact of Environmental, Social and Governance Factors on Firm Performance, Arun, T., Girardone, C., & Piserà, S. (2022). 17. ESG issues in emerging markets and the role of banks. *Handbook of Banking and Finance in Emerging Markets*, 321. Cerrone, R. (2022). Banking Regulation for ESG Principles and Climate Risk. Andrieș, A. M., & Sprincean, N. (2023). ESG performance and banks' funding costs. *Finance Research Letters*. Bakken, R. (2021). What is sustainable finance and why is it important. Harvard Extension school. Belasri, S., Gomes, M., & Pijourlet, G. (2020). Corporate social responsibility and bank efficiency. *Journal Multinational Finance and Management*.

⁵ Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկի կառավարման համակարգի ձեռնարկ, Ասիական զարգացման բանկ, 2014

⁶ About «Scaling up green finance practices in Armenia» readiness program funded by «Green Climate Fund», 2021

իրավասու մարմինների կողմից հաստատվել են ներքին կարգերը: ՀՀ առևտրային բանկերը նույնպես մշակել են և գործնականում առաջնորդվում են հաստատված կարգերով: Հայկական բանկային պրակտիկայում հիմնականում շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը երբեմն առանձին են դիտարկվում կորպորատիվ կառավարման ռիսկերից:

Հետազոտության մեթոդաբանություն: ՀՀ առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերի ուսումնասիրությունը և արդյունավետ կառավարման գործիքակազմի առաջարկությունը հիմնված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որպես մեզակարգավորողի, մշակված կանոնակարգերի, մեթոդական ուղեցույցների վերլուծության վրա: Այսինքն, հետազոտությունը հիմնված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ առևտրային բանկերի համար այսպես կոչված ռիսկի ախորժակի սահմանման կանոնների ուսումնասիրության վրա: Բացի այդ, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ բանկային գործունեության վերահսկողության բացառիկ իրավասությունը նույնպես պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին: Հետևաբար հետազոտության ընթացքում դիտարկվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից գործնականում կիրառվող բանկային վերահսկողության մեթոդները, եղանակները և գործիքակազմը:

Մյուս կողմից բանկային գործունեության ռիսկերի կառավարման ոսկե կանոնն է, որ ռիսկերի կառավարման համար պատասխանատվություն են կրում առևտրային բանկերը: Տրամաբանական է, որ ՀՀ կենտրոնական կողմից սահմանված ռիսկի ախորժակը զսպող խաղի կանոնների հիման վրա, յուրաքանչյուր առևտրային բանկ ինքն է մշակում իր գործունեության բիզնես մոդելին համարժեք ներքին կարգեր և կանոնակարգեր, որոնք հաստատվում են կառավարման իրավասու մարմնի կողմից որպես արդյունավետ գործունեության ուղենիշեր:

Այսպիսով, հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ինչպես ՀՀ կենտրոնական բանկի, այնպես էլ առևտրային բանկերի կարգերի ուսումնասիրության և ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման նոր մոտեցումների առաջարկության վրա:

ՀՀ բանկային համակարգում արդեն իսկ մշակույթ է ձևավորվում ԲՄԿ ռիսկերի կառավարման, պատասխանատու ֆինանսավորման հաշվետվությունների հրապարակումը: Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել ՀՀ առևտրային բանկերի ՁԼՄ-երում հրապարակումների, ինչպես նաև իրենց կայքերում տեղադրված տեղեկատվությունը, որոնք էլ հիմք են հանդիսացել որոշակի առաջարկությունների ձևավորման համար:

Հոդվածի շրջանակում ներկայացված առաջարկությունների համար հիմք են հանդիսացել միջազգային ֆինանսաբանկային համակարգի փորձի ուսումնասիրությունը և միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված ստանդարտները, մեթոդական ուղեցույցներն ու երաշխավորությունները:

Վերլուծություն: ԲՄԿ ռիսկերի վերաբերյալ առկա հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես հեղինակավոր մի շարք կազմակերպությունների (Միավորված Ազգերի Կազմակերպություն (UN), Համաշխարհային բանկ (WB), Ասիական Զարգացման բանկ (ADB), Բանկային վերահսկողության Բազելյան Կոմիտե (BIS), Եվրոպական կենտրոնական բանկ (ECB), Միջազգային Ֆինանսական Կորպորացիա (IFC), Եվրոպական ներդրումային բանկ (EIB), Վերականգնման վարկերի բանկ (KfW), Կանաչ ֆինանսավորման համակարգի համագործակցություն (NGFS), Կայուն բանկային և ֆինանսական հարթակ (SBFN) և այլն), այնպես էլ առանձին գիտնական հետազոտողների կողմից իրականացվող ուսումնասիրությունների ժամանակ հիմնական շեշտադրումը կատարվում է՝

- ԲՄԿ սահմանված ստանդարտների, պատասխանատու (կանաչ) ֆինանսավորման,
- «Բացառումների ցանկի» (Negative list)⁷ (արգելված բիզնես ծրագրեր, ոլորտներ և գործունեության տեսակներ, գնորդներ և մատակարարներ, ուղղորդիչ ցանկ),
- ԲՄԿ ռիսկերի կառավարման թափանցիկության (պատասխանատու ֆինանսավորման/ԲՄԿ հաշվետվության հրապարակում),
- Վերահսկողություն իրականացնող մարմինների (Բնապահպանության նախարարություն, Կենտրոնական բանկ, Ռեյտինգավորող կազմակերպություններ, Ներքին և արտաքին աուդիտ) Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության իրականացման,
- Բողոքարկման գործընթացների կազմակերպման մշակույթի (բիռակ-տիվիստների, էկոլոգիական տարբեր շարժումների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը վերահսկողություն իրականացնող մարմինների և ինստիտուտների հետ) արմատավորման հետ:

Իրավիճակը նույնն է ՀՀ բանկային համակարգի ԲՄԿ ռիսկերի կառավարման բնագավառում: ՀՀ Կենտրոնական բանկում որոշակի աշխատանքներ են կատարվում ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքակազմի մշակման և ներդրման ուղղությամբ: Ներկա պահի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկը հրապարակել է Կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզը⁷, որը հայեցակարգային նշանակություն ունեցող փաստաթուղթ է: Նշենք նաև, որ ՀՀ կենտրոնական բանկն առաջին անգամ ՀՀ ֆինանսական կայունության 2022թ. տարեկան հաշվետվության մեջ ներառել է նաև «Կլիմայական ռիսկերի արդիականությունը ֆինանսական կայունության տեսանկյունից»/Կլիմայական ռիսկերի փոխանցումը ֆինանսական

⁷ ՀՀ կենտրոնական բանկի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզ, ՀՀ կենտրոնական բանկ, Հոկտեմբեր, 2023թ.

համակարգը,⁸ որտեղ ներկայացված են գերմանական Sparkassenstiftung for International Cooperation (DSIK)-ի հետ համատեղ մշակված ֆինանսական հատվածի կլիմայական ռիսկերի գնահատման գործիքները (Ռիսկ ռադար (RISK RADAR), Ջերմային քարտեզ (HEATMAP)):

Այդուհանդերձ, ՀՀ առևտրային բանկերի կողմից ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման տեսանկյունից առանցքային դերակատարություն ունի ՀՀ կենտրոնական բանկի, որպես Բանկային վերահսկողություն իրականացման բացառիկ իրավասություն ունեցող ինստիտուտի, վերահսկողության գործիքակազմի թիրախային արդիականացումը:

Դիտարկենք մի քանի, մեր կարծիքով, առանցքային վերահսկողայկան գործիքների ԲՄԿ ռիսկերի տեսանկյունից թարմացման հիմնախնդիրները՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»⁹
Ֆինանսական ակտիվների դասակարգման կարգը, որպես վարկային ռիսկի կառավարման, դոլարիզացիայի դեմ պայքարի առանցքային գործիք, լավագույն ձևով կարող է ծառայել նաև որպես ՀՀ առևտրային բանկերի կողմից ԲՄԿ ռիսկերի կառավարման արդյունավետ գործիք:

Այս առումով, ֆինանսական ակտիվների դասակարգման օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով դասակարգման աղյուսակի «Սուբյեկտիվ չափանիշ՝ ըստ հայտանիշների» սյունակում անհրաժեշտ է ըստ ակտիվների դասերի կատարել ներքոհիշյալ լրացումները՝

Աղյուսակ 1¹⁰

Ակտիվի դասը	Սուբյեկտիվ չափանիշ՝ ըստ հայտանիշների
1	2
1. Ստանդարտ	Փոխառուի գործունեությունը և ակտիվի նպատակը ԲՄԿ ռիսկեր չեն պարունակում
2. Հսկվող	Փոխառուի գործունեությունը և ակտիվի նպատակը ԲՄԿ ցածր ռիսկեր են պարունակում

⁸ ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2022թ.
⁹ Առաջարկությունների հիմքում ընկած է մեթոդաբանության այն մոտեցումը, որ կանաչ ակտիվները կարող են ՀՀ առևտրային բանկերի համար լրացուցիչ ծախսերի կատարման պատճառ հանդիսանան, հետևաբար պետք է ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրանց դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման մեղմ մոտեցումներ կիրառվեն:
¹⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից

3. Ոչ ստանդարտ	Փոխառուի գործունեությունը և ակտիվի նպատակը ԲՄԿ միջին ռիսկեր են պարունակում
4. Կասկածելի	Փոխառուի գործունեությունը և ակտիվի նպատակը ԲՄԿ բարձր ռիսկեր են պարունակում
5. Անհուսալի	Փոխառուի գործունեությունը և ակտիվի նպատակը ԲՄԿ անկառավարելի բարձր ռիսկեր են պարունակում

Հիմք ընդունելով վերը ներկայացված մեթոդաբանական մոտեցումները պետք է համարժեք փոփոխություններ կատարվեն ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հաշվարկման կարգում: Մասնավորապես, առաջարկվում է հնարավոր կորուստների պահուստների ձևավորման ժամանակ կիրառել ֆիքսված դրույթաչափեր՝ առանց միջակայքերի:

Աղյուսակ 2¹¹

Պահուստի տեսակը	Դաս	ՀՀ դրամ	Արտարժույթ
1	2	3	4
Ընդհանուր պահուստ	Ստանդարտ	1%	1%
Հատուկ պահուստ	Հսկվող	15%	18%
	Ոչ ստանդարտ	25%	30%
	Կասկածելի	75%	80%
	Անհուսալի	100%	100%

Որպես բանկային գործունեության ընդհանրական կարգավորման առանցքային գործիք, ինչպես նաև որպես բանկային գործունեության հիմնական ռիսկերի կառավարման հիմնարար փաստաթուղթ, կանոնակարգ 2-ի Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում (վարկային ռիսկ) օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակում կատարել հետևյալ լրացումը՝

¹¹ «Բանկային գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2

Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակ		
Ակտիվների տեսակները	Ռիսկի կշիռներ (տոկոս)	
	Դրամային ակտիվների համար	Արտարժույթային ակտիվների համար
1	2	3
ԲՄԿ ռիսկեր չպարունակող ակտիվներ	0	10

2. Թիվ 34՝ Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ

ԲՄԿ ռիսկերի առումով կարևորվում է ռիսկերի կայացման հավանականությունների և դրանց կայացման դեպքում հնարավոր կորուստների սթրես թեստավորումը: Ներկայումս ՀՀ առևտրային բանկերը եռամսյակային պարբերականությամբ ազատ ոճով ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում սթրես-թեստերի վերաբերյալ թիվ 34 հաշվետվությունը: Վերջինս պետք է համապատասխանի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի պահանջներին: Սակայն Կանոնակարգ 4-ում ներկայացված են միայն վարկային, շուկայական, իրացվելիության, գործառնական, համբավի, ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկերը: Հետևաբար Կանոնակարգ 4-ի 4-րդ՝ «Ռիսկերի կառավարում» բաժնում պետք է ներառել նաև առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերը և դրանց նկարագրությունը¹³: Արդյունքում, բանկերը եռամսյակային պարբերականությամբ դարձյալ ազատ ոճով ՀՀ կենտրոնական բանկ կներկայացնեն նաև ԲՄԿ ռիսկերի սթրես-թեստավորման արդյունքները:

Նույն տրամաբանությամբ, մեր կարծիքով, անհրաժեշտ է ՀՀ առևտրային բանկերի կողմից ներկայացվող էական փոփոխությունների և բացասական զարգացումների վերաբերյալ (յուրաքանչյուր փոփոխության դեպքում) թիվ 35 հաշվետվության մեջ ներառել նաև էական նախադեպերը ԲՄԿ ռիսկերի համար: Վերջինս հիմք կհանդիսանա նախադեպերի հարուստ բազա ձևավորելու նպատակով, որը հետագայում կարող է հրապարակվել ՀՀ կենտրոնական բանկի կայքում (առանց նշելով առևտրային բանկի անվանումը):

3. ՀՀ առևտրային բանկերի համար ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման համար խթան կհանդիսանա այն մոտեցումը, որ կանաչ պարտատոմսերով ներգրավված միջոցները (ՀՀ դրամով և արտարժույթով) պետք է ազատվեն ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նվազագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվից:

¹² Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից

¹³ Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները, Կանոնակարգ 4

ՀՀ առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով կարևոր է նաև ՀՀ տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման կարգի համապատասխանեցումը¹⁴:

Նախ, ակտիվների որակի գնահատման ժամանակ պետք է հիմք ընդունվի ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման վերը ներկայացված մոտեցումները:

Ք՝ Կապիտալի համարժեքությունը ճշգրտող գործոնների շարքում պետք է ավելացնել բանկի ԲՄԿ ռիսկեր հետ ակնկալվող կորուստների հավանականությունը և դրանց մեծությունը:

Մ՝ Կառավարում տարրի գնահատման հարցաշարում ներառել բանկի կառավարման մարմինների ԲՄԿ ռիսկերի կառավարման գործիքակազմը, ԲՄԿ ռիսկերի սթրես-թեստավորման արդյունքները:

4. Բանկերի գործունեության միասնական հաշվետվության (ԲԳՄՀ) տարրերը և դրանց հաշվարկման մեթոդաբանության մեջ անհրաժեշտ է ակտիվները, դրանց դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստաֆոնդերի, ռիսկով կշռված ակտիվների մեծությունը հաշվարկել վերը ներկայացված մեթոդաբանության համապատասխան:

ԲՄԿ ռիսկերի մեջ առանձնահատուկ կարևորություն ունի կորպորատիվ կառավարման ռիսկի գնահատումը: Վերջինս ենթադրում է Բանկի կառավարման մարմինների իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատում և դրանց վերահսկողության ներքին հսկողության համակարգերի առկայություն: ԲՄԿ ռիսկերի կառավարման առումով, կարծում ենք, նպատակահարմար կլիներ **Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումում էկոաուդիտորի (ցանկալի է՝ միջազգային որակավորմամբ/սերտիֆիկատով) հաստիքի ամրագրումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում**: ԲՄԿ ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է նաև և ներքին աուդիտի, և համապատասխանության ապահովման գործառույթի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատանքային պլաններում Բանկի ԲՄԿ ռիսկերի, դրանց կառավարման արդյունավետության գնահատման բիզնես գործընթացների ստուգում:

5. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում հարկ է Բանկի արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների դիտարկումների շրջանակում ամրագրել նաև ԲՄԿ ռիսկերի գնահատման գործառույթը նույնպես:

¹⁴ ՀՀ տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի ՔԱՄԵԼՍ հաշվարկման, հաստատման կարգ

Կենտրոնական բանկերի կողմից Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության (RBS - Risks based supervision) հետագա կատարելագործումը և աստիճանական անցումն ավելի արդյունավետ՝ Վերահսկողական դիտարկման և գնահատման գործընթացին (SREP – Supervisory review and evaluation process) ենթադրում է առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերի մշտադիտարկում և ռեյտինգավորում՝ հնարավոր կորուստների, ծախսերի ավելացման կամ կապիտալի կորուստի հավանականության տեսանկյունից:

Եզրակացություններ: ՀՀ առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերի գնահատման և արդյունավետ կառավարման բնագավառում առանցքային է ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես մեզակարգավորողի բանկային վերահսկողության գործիքների կատարելագործումը: Մեր կարծիքով, առաջընթաց կգրանցվի ներքոհիշյալ գործիքակազմում կատարվելիք փոփոխությունները՝ Ֆինանսական ակտիվների դասակարգման օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով դասակարգման աղյուսակի «Սուբյեկտիվ չափանիշ՝ ըստ հայտանիշների» սյունակում անհրաժեշտ է ըստ ակտիվների դասերի նշում կատարել Փոխառուի գործունեության և ակտիվի նպատակի ԲՄԿ ռիսկերի պարունակման վերաբերյալ: Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստների ձևավորման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ֆիքսված դրույքաչափեր՝ առանց միջակայքերի:

Բանկային գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները Կանոնակարգ 2-ի¹⁵ Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում (վարկային ռիսկ) օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակում անհրաժեշտ է կատարել լրացում ԲՄԿ ռիսկեր չպարունակող ակտիվների համար:

Կանոնակարգ 4-ի 4-րդ՝ «Ռիսկերի կառավարում» բաժնում պետք է ներառել նաև առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերը և դրանց նկարագրությունը:

Բանկերը եռամսյակային պարբերականությամբ դարձյալ ազատ ոճով ՀՀ կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն նաև ռիսկերի սթրես-թեստավորման արդյունքները:

Անհրաժեշտ է ՀՀ առևտրային բանկերի կողմից ներկայացվող **Էական փոփոխությունների և բացասական զարգացումների վերաբերյալ (յուրաքանչյուր փոփոխության դեպքում) թիվ 35 հաշվետվության** մեջ ներառել նաև Էական նախադեպերը ԲՄԿ ռիսկերի համար: Վերջինս հիմք կհանդիսանա նախադեպերի հարուստ բազա ձևավորելու նպատակով, որը հետագայում կարող է հրապարակվել ՀՀ կենտրոնական բանկի կայքում (առանց նշելով առևտրային բանկի անվանումը):

¹⁵Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, Կանոնակարգ 2

ՀՀ առևտրային բանկերի համար ԲՄԿ ռիսկերի արդյունավետ կառավարման համար խթան կհանդիսանա այն մոտեցումը, որ կանաչ պարտատոմսերով ներգրավված միջոցները (ՀՀ դրամով և արտարժույթով) պետք է ազատվեն ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նվազագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվից:

ՀՀ տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման կարգում ակտիվների որակի գնահատման ժամանակ պետք է հիմք ընդունվի ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման վերը ներկայացված մոտեցումները:

Ք՝ Կապիտալի համարժեքությունը ճշգրտող գործոնների շարքում պետք է ավելացնել բանկի ԲՄԿ ռիսկեր հետ ակնկալվող կորուստների հավանականությունը և դրանց մեծությունը:

Մ՝ Կառավարում տարրի գնահատման հարցաշարում ներառել բանկի կառավարման մարմինների ԲՄԿ ռիսկերի կառավարման գործիքակազմը, ԲՄԿ ռիսկերի սթրես-թեստավորման արդյունքները:

Բանկերի գործունեության միասնական հաշվետվության (ԲԳՄՀ) տարրերը և դրանց հաշվարկման մեթոդաբանության մեջ անհրաժեշտ է ակտիվները, դրանց դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստաֆոնդերի, ռիսկով կշռված ակտիվների մեծությունը հաշվարկել վերը ներկայացված մեթոդաբանության համապատասխան:

Անհրաժեշտ է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումում էկոաուդիտորի (ցանկալի է՝ միջազգային որակավորմամբ/սերտիֆիկատով) հաստիքի ամրագրումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում:

ԲՄԿ ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է նաև և ներքին աուդիտի, և համապատասխանության ապահովման գործառույթի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատանքային պլաններում Բանկի ԲՄԿ ռիսկերի, դրանց կառավարման արդյունավետության գնահատման բիզնես գործընթացների ստուգում:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում հարկ է Բանկի արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների դիտարկումների շրջանակում ամրագրել նաև ԲՄԿ ռիսկերի գնահատման գործառույթը նույնպես:

Կենտրոնական բանկի կողմից Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության (RBS - Risks based supervision) հետագա կատարելագործումը և աստիճանական անցումն ավելի արդյունավետ՝ Վերահսկողական դիտարկման և գնահատման գործընթացին (SREP – Supervisory review and evaluation process) ենթադրում է առևտրային բանկերի ԲՄԿ ռիսկերի մշտադիտարկում և ռեյտինգավորում՝

հնարավոր կորուստների, ծախսերի ավելացման կամ կապիտալի կորուստի հավանականության տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկի կառավարման համակարգի ձեռնարկ, Ասիական զարգացման բանկ, 2014
2. ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ
3. Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, Կանոնակարգ 2
4. Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը, Կանոնակարգ 3
5. Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները, Կանոնակարգ 4
6. ՀՀ տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և գնահատման կարգ
7. Բանկերի գործունեության միասնական հաշվետվության տարրերը և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը
8. ՀՀ կենտրոնական բանկի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզ, ՀՀ կենտրոնական բանկ, Հոկտեմբեր 2023
9. Sustainability Guideline Assessment and management of Environmental, Social, and Climate Aspects: Principles and Procedures 28 February 2022 Author: KfW Development Bank
10. Environmental and Social Policy, European Bank for Reconstruction and Development, April 2019
11. Transition-related risks & opportunities, UNEP Finance Initiative - Oliver Wyman, April 2018
12. Guidance Note 1 Assessment and Management of Environmental and Social Risks and Impacts, IFC, WB, Published January 1, 2012 (updated June 14, 2021
13. Environmental and Social Management System Implementation Handbook GENERAL, IFC, WB
14. Environmental, Health, and Safety General Guidelines, IFC, WB
15. The WORLD BANK Environmental and Social Framework, WB, EBRD, IDA
16. ENVIRONMENTAL ASSESSMENT GUIDELINES, ADB, 2003
17. Miralles-Quirós, M. M., Miralles-Quirós, J. L., & Redondo Hernández, J. (2019). ESG performance and shareholder value creation in the banking industry: International differences. *Sustainability*, 11(5), 1404.

18. Arun, T., Girardone, C., & Piserà, S. (2022). 17. ESG issues in emerging markets and the role of banks. *Handbook of Banking and Finance in Emerging Markets*, 321.
19. Cerrone, R. (2022). Banking Regulation for ESG Principles and Climate Risk.
20. Aboud A. Diab A. (2018). The impact of Social, Environmental and Corporate Governance, Disclosures on Firm Value, *Jae* 8, 2018.
21. Atan, R., Alam, M. M., Said J., and Zamri, M. (2018) The impact of Environmental, Social and Governance Factors on Firm Performance.
22. Andrieș, A. M., & Sprincean, N. (2023). ESG performance and banks' funding costs. *Finance Research Letters*.
23. Bakken, R. (2021). What is sustainable finance and why is it important. Harvard Extension school.
24. Belasri, S., Gomes, M., & Pijourlet, G. (2020). Corporate social responsibility and bank efficiency. *Journal Multinational Finance and Management*.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

Համառոտագիր: ՀՀ բանկային համակարգի զարգացման ժամանակակից միտումների վրա էական ազդեցություն ունեցան աշխարհաքաղաքական այնպիսի խոշորամասշտաբ իրադարձությունները, ինչպիսիք են՝ COVID 19 համավարակը, Արցախյան պատերազմը: 2020թ-ից սկսած ՀՀ բանկային համակարգը թևակոխեց նեոբանկինգի փուլ, որի բնորոշ առաջնահատկություններից են՝ թվայնացումը, կայուն զարգացումը կամ ԲՄԿ ռիսկերի կառավարումը: Թվային փոխակերպումների և պատասխանատու ֆինանսավորման (responsible financing) մշակույթի ձևավորման հարցում էական է ՀՀ կենտրոնական բանկի դերն ու նշանակությունը: Խնդիրն այն է, որ ՀՀ կենտրոնական բանկն է կանոնակարգում ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը և միաժամանակ իրականացնում է բանկային վերահսկողության բացառիկ իրավասությունը:

Հոդվածում դիտարկվել են ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ժամանակ գործածվող մի շարք գործիքներ, որոնց արդիականացումը դիտարկվել է ԲՄԿ ռիսկերի կառավարման տեսանկյունից:

Արդյունքում ներկայացվել են առաջարկություններ բանկերի ակտիվների ռիսկով կշռելու, ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման, ներքին հսկողության կազմակերպման նվազագույն պայմանների, ինչպես նաև կորպորատիվ կառավարման բնագավառում:

Բանալի բառեր: Բնապահպանական, սոցիալական, կառավարման ռիսկեր, առևտրային բանկերի գործունեության գնահատում և ռեյտինգավորում,

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության գործիքակազմ, Բանկի գործունեության միասնական հաշվետվություն, Բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատական, Ռիսկով կշռված ակտիվներ, Ֆինանսական ակտիվների դասակարգում և հնարավոր կորուստների պահուստաֆոնդերի ձևավորում:

ПРОБЛЕМЫ ЭКОЛОГИЧЕСКОГО, СОЦИАЛЬНОГО И КОРПОРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ РА.

Норайр Сафарян
Рубен Сафарян

Аннотация: Крупномасштабные геополитические события, такие как пандемия COVID-19 и Арцахская война, оказали существенное влияние на современные тенденции развития банковской системы РА. С 2020 года банковская система РА вступила в стадию необанкинга, характерными чертами которого являются цифровизация, устойчивое развитие или управление экологическими, социальными и управленческими (ESG) рисками. Роль и значение Центрального банка РА имеют важное значение в формировании культуры цифровых преобразований и ответственного финансирования. Проблема в том, что Центральный банк РА регулирует деятельность коммерческих банков РА и одновременно осуществляет исключительную компетенцию банковского надзора.

В статье рассмотрен ряд инструментов, используемых в ходе банковского надзора Центрального банка РА, модернизация которых рассмотрена с точки зрения управления экологическими, социальными и управленческими (ESG) рисками. По итогам были представлены рекомендации в части взвешивания рисков банковских активов, классификации финансовых активов и формирования резервов на возможные потери, минимальных условий организации внутреннего контроля, а также в области корпоративного управления.

Ключевые слова: Экологические, социальные, управленческие (ESG) риски, оценка и рейтинг деятельности коммерческих банков, инструментарий финансового контроля Центрального банка РА, единый отчет о деятельности банка, сводная оценка показателей банков, взвешенные активы с учетом риска, классификация финансовых активов и формирование резервных фондов на случай возможных потерь.

ENVIRONMENTAL, SOCIAL AND CORPORATE MANAGEMENT ISSUES IN THE RA BANKING SYSTEMNORAYR SAFARYAN

RUBEN SAFARYAN

Abstract: The modern development trends of the Armenian banking system were significantly influenced by such large-scale geopolitical events as the COVID-19 pandemic and the Artsakh war. Starting in 2020, the Armenian banking system entered the neo-banking stage, the main features of which are digitalization, sustainable development or management of ESG risks. The role and significance of the RA Central Bank are essential in the formation of a culture of digital transformation and responsible financing. The problem is that the RA Central Bank regulates the activities of commercial banks and at the same time exercises the exclusive jurisdiction of banking supervision.

This article considers several tools used during banking supervision by the RA Central Bank, the modernization of which is considered from the perspective of ESG risk management.

As a result, recommendations were presented on the risk assessment of bank assets, classification of financial assets and formation of reserves for possible losses, minimum conditions for organizing internal control, as well as in the field of corporate governance.

Keywords: Environmental, social, governance risks, assessment, and rating of commercial banks' activities, financial supervision tools of the RA Central Bank, unified report on bank activities, summary assessment of bank indicators, risk-weighted assets, classification of financial assets, formation of reserve funds for possible losses.